Հավելված N 2

ՀՀ վարչապետի 2018 թ.

սեպտեմբերի 19 -ի N 1230 - Ն որոշման

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը

Անահիտ Ավանեսյան, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարար:

2. Գործուղման վայրը և ժամկետները

2026 թվականի հոկտեմբերի 19–22-ը, Կորեայի Հանրապետություն, Սեուլ:

3. Հրավիրող կողմը

Կորեայի Հանրապետության առողջապահության և բարեկեցության նախարարություն և Առողջապահության համաշխարհային կազմակերպություն (ԱՀԿ):

4. Գործուղման նպատակը

Մասնակցություն «Համաշխարհային կենսատեխնոլոգիաների 2026» (World Bio Summit 2026) գագաթնաժողովին, որի շրջանակում կայացել է «Կենսաառողջապահության ոլորտում նորարարությունների ընդլայնումը արհեստական բանականության միջոցով» խորագրով համաժողովը: Գործուղման նպատակն էր ներկայացնել Հայաստանի առողջապահության ոլորտում իրականացվող բարեփոխումները, ուսումնասիրել առողջապահության թվայնացման և արհեստական բանականության կիրառման միջազգային փորձը, ինչպես նաև քննարկել միջազգային համագործակցության ընդլայնման հնարավորությունները:

5. Քննարկված թեմաները

- Արհեստական բանականության (ԱԲ) կիրառումը առողջապահության և կենսաառողջապահության ոլորտներում:
- ԱԲ-ի կիրառումը գիտական հետազոտություններում, հիվանդությունների կանխարգելման, վաղ հայտնաբերման և բուժման գործընթացներում:
- Նոր դեղերի և բժշկական սարքավորումների մշակման նորարարական լուծումները:

- Առողջապահական ծառայությունների որակի և արդյունավետության բարձրացումը՝ թվային տեխնոլոգիաների կիրառմամբ:
- Կենսաառողջապահության ոլորտում ներդրումների խթանումը, պետական-մասնավոր գործընկերությունը և միջազգային համագործակցության զարգացումը:
- ԱԲ-ի պատասխանատու կիրառումը, էթիկական սկզբունքների պահպանումը և նորարարությունների առավելությունների արդար հասանելիության ապահովումը:

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը

2026 թվականի հոկտեմբերի 21-ին նախարար Անահիտ Ավանեսյանը մասնակցել է գագաթնաժողովի բացման արարողությանը և պետությունների ու առողջապահության ոլորտի ղեկավարների երկխոսությանը, ինչպես նաև «Առողջապահության ոլորտում արհեստական բանականության վերաբերյալ Սեուլի հռչակագրի» ներկայացման և հայտարարման արարողությանը: Հոկտեմբերի 22-ին նախարարը մասնակցել է «Նոր գիտություն. ԱԲ-ի բերած ապագան», «Նոր արժեք. ԱԲ-ի ստեղծած արժեքները» և «Նոր ֆինանսավորում. կենսաառողջապահական նորարարություններ» թեմաներով նիստերին: Քննարկումների ընթացքում անդրադարձ է կատարվել առողջապահության ոլորտում արհեստական բանականության կիրառման հնարավորություններին, բժշկական նորարարությունների զարգացմանը, ներդրումների ներգրավմանը և միջազգային գործընկերությունների ընդլայնմանը: Գագաթնաժողովի շրջանակում կայացել է նաև Հայաստանի և Կորեայի Հանրապետության առողջապահության նախարարների երկկողմ հանդիպումը, որի ընթացքում քննարկվել են փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող ոլորտային հարցեր:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը

Գագաթնաժողովի շրջանակում ներկայացվել և հայտարարվել է «Առողջապահության ոլորտում արհեստական բանականության վերաբերյալ Սեուլի հռչակագիրը»: Քննարկումների ընթացքում ընդգծվել է արհեստական բանականության պատասխանատու կիրառման, կենսաառողջապահական նորարարությունների զարգացման և դրանց առավելությունների արդար հասանելիության ապահովման կարևորությունը: Կարևորվել է նաև առողջապահության ոլորտում միջազգային համագործակցության, մասնագիտական փորձի փոխանակման և համատեղ նախաձեռնությունների զարգացման անհրաժեշտությունը:

8. Առաջարկություններ, դրանց ընթացք տալու եղանակը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները

Առաջարկվում է ուսումնասիրել առողջապահության ոլորտում արհեստական բանականության կիրառման առաջավոր միջազգային փորձը և գնահատել դրա

ներդրման հնարավորությունները Հայաստանում: Անհրաժեշտ է շարունակել առողջապահության թվայնացման գործընթացը, զարգացնել թվային առողջապահական գործիքների կիրառումը և գնահատել արհեստական բանականության հնարավորությունները հիվանդությունների կանխարգելման, վաղ հայտնաբերման և ախտորոշման արդյունավետության բարձրացման ուղղությամբ: Կարևոր է նաև ընդլայնել միջազգային համագործակցությունը, խթանել մասնագիտական փորձի փոխանակումը և ուսումնասիրել կենսաառողջապահության ոլորտում ներդրումների ներգրավման հնարավորությունները: Այս ուղղություններով աշխատանքները կարող են իրականացվել ՀՀ առողջապահության նախարարության համապատասխան ստորաբաժանումների և շահագրգիռ կառույցների համագործակցությամբ՝ ըստ սահմանված առաջնահերթությունների: Ակնկալվող արդյունքներն են առողջապահական ծառայությունների որակի և արդյունավետության բարձրացումը, նորարարական տեխնոլոգիաների ներդրման հնարավորությունների ընդլայնումը և միջազգային համագործակցության ամրապնդումը:

Ակնկալվող արդյունքներն են՝ առողջապահական ծառայությունների որակի և արդյունավետության բարձրացումը, նորարարական տեխնոլոգիաների ներդրման հնարավորությունների ընդլայնումը և միջազգային համագործակցության ամրապնդումը:

9. Գործուղման ֆինանսավորում

Կորեայի Հանրապետություն գործուղման ճանապարհածախսը և գիշերավարձի ծախսերը կատարվելու են հրավիրող կողմի միջոցների հաշվին:

26.10.2026թ